Հաստատում եմ՝
«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտոր Դ. Գյուրջինյան
«Ապրիլի 22», 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Մեր Արմոյի Շիրինյանի «Հայաստանի հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» թեմայով ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՄՀՔ ֆակուլտետի ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. ապրիլի 22-ի նիստին մասնակցում էին ամբիոնի վարիչի ժ/պ, փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Ասլանյանը, ի.գ.դ., ք.գ.թ. Արմեն Հարությունյանը, փ.գ.թ., դոցենտ Գևորգ Հակոբյանը, ք.գ.թ., դոցենտ Նարեկ Գրիգորյանը, ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Գեորգի Միրզաբեկյանը, պ.գ.թ., ավագ դասախոս Արմեն Պետրոսյանը, բ.գ.թ., ավագ դասախոս Վահե Առաքելյանը, ավագ դասախոս Լուսինե Պողոսյանը:

Նիստի օրակարգում, ի թիվս այլ հարցերի, դրված էր Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի 056 մասնագիտական խորհրդին հրապարակային պաշտպանության ներկայացված Մեր Արմոյի Շիրինյանի «Հայաստանի հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» թեմայով ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության քննարկումը:

Նիստի ընթացքում ելույթ ունեցավ ատենախոսության գրախոս ք.գ.թ., դոցենտ Մարգարիտ Պետրոսյանը՝ ներկայացնելով նաև իր գրավոր կարծիքը: Ատենախոսության վերաբերյալ ելույթ ունեցան նաև Ա. Հարությունյանը, Ա. Պետրոսյանը, Գ. Միրզաբեկյանը, Վ. Առաքելյանը, Լ. Պողոսյանը:

Մեր Արմոյի Շիրինյանի «Հայաստանի հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» թեմայով ատենախոսության քննարկման արդյունքում նիստի մասնակիցները ներկայացրին հետևյալ դիտարկումները և նկատառումները.

«Հայաստանի հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» թեմայի դիտարկումն առանձնահատուկ կարևորություն և արդիականություն է ստանում միջազգային հարաբերությունների և անվտանգային միջավայրի խորքային և համապարփակ կերպափոխումների պայմաններում: Արդիականությունը պայմանավորված է նաև վերափոխումներով ինչպես գլոբալ, այնպես էլ տարածաշրջանային և ներպետական գործոններով:

Միջազգային հարաբերությունների համակարգն արդի փուլում բնութագրվում է բազմաբևեռության խորացմամբ, ուժային հավասարակշռության շարունակական փոփոխություններով, ավանդական և հիբրիդային սպառնալիքների համակցմամբ: Այս խնդիրների հաշվառմամբ, փոքր պետությունների հավաքական անվտանգային մեխանիզմների առկայությունը և կիրառումը դառնում է կենսական նշանակություն ունեցող հարց: Բազմաոլորտ անվտանգային համագործակցության ձևերի, պետությունների և միջազգային կառույցների ինստիտուցիոնալ կարողությունների և գործունեության արդյունավետության բարձրացման հնարավոր եղանակների ուսումնասիրությունը ձեռք է բերում տեսական և կիրառական հրատապություն և բարձր արժեք:

Մի շարք տարածաշրջաններ, այդ թվում՝ Հարավային Կովկասը, շարունակում է բնութագրվել որպես կոնֆլիկտայնությամբ և անկայունությամբ բնութագրվող գոտի: ԽՍՀՄ փլուզումից հետո Հարավային Կովկասում անվտանգային խնդիրները, հակամարտությունների ակտիվացումը պայմանավորված էին ոչ միայն վերջին տարիներին առկա լարվածությամբ, այլև նաև այս տարածաշրջանում ռազմավարական շահեր հետապնդող գերտերությունների միջև առկա մրցակցությամբ, որը մեծապես պայմանավորված էր Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությամբ: Նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում «սառեցված» հակամարտությունները դարձան իրավիճակի կառավարման կարևոր լծակներ ազդեցիկ պետությունների համար:

Սահմանային լարվածությունը, հակամարտությունները, ուժերի հարաբերակցության փոփոխություններն ուղղակիորեն ազդում են անվտանգության համակարգի կայունության վրա՝ էականորեն ընդլայնելով ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին ու արտաքին սպառնալիքների շրջանակը: Այս պայմաններում հավաքական անվտանգային համագործակցության արդյունավետության, սահմանափակումների, խութերի, հնարավորությունների ու հեռանկարների համապարփակ վերլուծությունը, հնարավոր զարգացումների կանխատեսումն ու դրանց հակազդման արդյունավետ մեխանիզմների մշակումը դառնում է խիստ արդիական ու կարևոր է ՀՀ ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների ու սպառնալիքների վաղ ախտորոշման ու հակազդման համատեքստում:

Ավելին, ՀՀ մասնակցությունը տարբեր միջազգային և տարածաշրջանային անվտանգային կառույցներում հանգեցնում է տեսական և գործնական մի շարք հարցադրումների՝ կապված դաշնակցային պարտավորությունների, ինքնիշխանության, ռազմաքաղաքական կայունության ու հավասարակշռության և արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերում: Այս հանգամանքը պահանջում է խորքային վերլուծություն հստակեցնելու համար, թե որքանով են այդ մեխանիզմները ապահովում կամ կարող են ապահովել ՀՀ ազգային անվտանգության շահերի լիարժեք իրացումը:

Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ անվտանգության ըմբռնումը զգալիորեն ընդլայնվել է՝ ներառելով կիբեռանվտանգությանը, հիբրիդային, կոգնիտիվ, տեղեկատվական պատերազմներին վերաբերող խնդիրների լայն շրջանակ, ուստի հավաքական անվտանգային համակարգերի ու համագործակցության մեխանիզմների հարմարեցումն և համապատասխանեցումը նոր մարտահրավերներին և սպառնալիքներին դառնում է խիստ կարևոր հետազոտական ուղղություն հատկապես ՀՀ նման խոցելի անվտանգային միջավայրում գտնվող պետության համար: Այս պայմաններում հավաքական անվտանգային համագործակցության համակարգերի արդյունավետության և սահմանափակումների խնդիրը պահանջում են գիտական համակողմանի ուսումնասիրություն:

Թեկնածուական ատենախոսության «Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» վերնագիրը ամբողջապես համապատասխանում է դրա բովանդակությանը և իրականացված հետազոտության բնույթին: Հետազոտության նպատակը, խնդիրները, գիտական նորույթը հստակորեն ձևակերպված են: Հետազոտության վարկածը, հիմնական նպատակներն ու խնդիրները, աղբյուրների տեսությունը, թեմայի գիտական ուսումնասիրվածության աստիճանը և գիտական նորույթն ու գործնական նշանակությունը հստակ են ձևակերպված:

Ատենախոսությունն աչքի է ընկնում գիտական նորույթով, մասնավորապես՝

1. Հետազոտվել և գնահատվել են հավաքական անվտանգության՝ որպես խմբային համակարգի ապահովման հիմնական տարբերակները (միություններ, դաշինքներ)՝ հիմնված ուժերի հավասարակշռության հայեցակարգի վրա, բացահայտվել են հավաքական անվտանգության շրջանակներում անուղղակի ազդեցության, սակայն կարևոր նշանակություն ունեցող գործոնները:
2. Վերլուծվել են անվտանգային այնպիսի կարևոր նախապայմաններ, որոնք լուծում են պահանջում անվտանգային, ռազմաքաղաքական կազմակերպության գործառնական դաշտում, կանխատեսվել են ԱՄՆ-ի

գերակայությունը և հավաքական անվտանգության ծանրությունը կրելու նրա պատրաստակամությունը որպես ՆԱՏՕ-ի գոյության համար կարևոր գործոն:

3. Գնահատվել են ՀՀ անվտանգային շահերը հավաքական գործակցության ձևաչափում: Որպես կարևոր հետևություն արձանագրվել է, որ հավաքական անվտանգության արդյունավետության ու կենսունակության առաջնային ցուցանիշն ազգային շահերի համադրելի մոտեցումներն են և դրանց հիմքով քաղաքական համակարգված վարքի դրսևորումը միջազգային կազմակերպությունների հարթակներում:
4. Կարևորվել է ՀՀ բալանսավորված անվտանգային արտաքին քաղաքականության առաջնահերթությունը, ինչպես նաև հստակեցվել է խաղաղության ապահովման գործողություններին մասնակցության կարևորությունը ՀՀ-ի համար՝ միջազգային անվտանգության ապահովման կառույցների հետ արդյունավետ գործակցային ձևաչափ հաստատելու, խաղաղապահ բրիգադների հիմքով ձեռք բերած մասնագիտական փորձը ներդնելու և պետության հեղինակությունը բարձրացնելու նպատակով:

Աշխատանքի կառուցվածքի և բովանդակության ակնարկ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից (ութ ենթագլուխներից), եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից:

- **Ներածության** մեջ հիմնավորել է թեմայի արդիականությունը, սահմանվել են նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը: Ներկայացվել են աշխատանքի գիտական նորույթը, ստացված արդյունքների տեսական և կիրառական նշանակությունը:
- Ատենախոսության **առաջին**՝ «Հավաքական անվտանգության գործակցությունը միջազգային բազմակողմ հարաբերությունների համատեքստում» վերտառմամբ **գլխում** քննարկվում են հավաքական գործակցությանը վերաբերող հարցեր՝ որպես անվտանգային արտաքին քաղաքականության առանցքային կառուցակարգ, գնահատվում են գործակցության այս ձևաչափի առանձնահատկություններն ու գործունեության հիմնական շրջանակը: Երկրորդ ենթագլխում մատնանշվում է բազմաբևեռ աշխարհակարգում միջազգային կառույցների կարևոր դերը հակամարտությունների կանխարգելման և գլոբալ կառավարման համատեքստում: Նշվում է, որ ռեսուրսների սակավությունը, գերտերությունների ազդեցությունը, շահերի բախումը կարող են խոչընդոտ լինել փոքր պետությունների համար անվտանգության ապահովման համատեքստում:
- «Հավաքական անվտանգության մոդելի սկզբնավորումը և հետագա զարգացումները Ազգերի լիգայի ու Միավորված ազգերի կազմակերպության ձևաչափում» վերնագրով **երկրորդ գլխում** ներկայացվում են հավաքական

անվտանգության համակարգերի ստեղծման գործընթացի էվոլուցիան Ազգերի լիգայի և ՄԱԿ-ի օրինակով, ինստիտուցիոնալացման առանձնահատկությունները, ինչպես նաև դիտարկվում է ՀՀ ազգային շահերի, ազգային ինքնության վերաբերյալ զարգացումները վերոնշյալ կազմակերպությունների շրջանակներում:

- Ատենախոսության **երրորդ՝** «Հայաստանի Հանրապետության ինտեգրվածությունը հավաքական անվտանգային գործակցության արդի կառուցակարգերին» վերնագրով **գլխում** քննարկվում են ՀՀ-ԵՄ հարաբերությունների հիմնական շրջափուլերին, անվտանգային ոլորտում համագործակցութանը, եվրաինտեգրման գործընթացին վերաբերող հարցեր: Ներկայացվում են ՀՀ-ՆԱՏՕ գործակցությանը, անվտանգային ոլորտում ինստիտուցիոնալ համագործակցությանը, խաղաղապահ առաքելությունների իրականացմանը վերաբերող խնդիրներ, դիտարկվում են ՀՀ-ն՝ ՀԱՊԿ-ին անդամակցության, լարված հարաբերություններին, «համակարգային ձախողմանը», հիմնական ազդող գործոնների պատճառներն ու հնարավոր զարգացումները:
- **Եզրակացությունում** ընդհանրացվում են հիմնական արդյունքները:

Արդյունքների հիմնավորվածությունը և գիտական արժեքը

Թեկնածուական ատենախոսությունում առկա են հեղինակ Մ. Շիրինյանի կողմից կատարված եզրակացություններ և գործնական առաջարկներ, այն ունի հստակ գիտատեսական և կիրառական նշանակություն, հարստացնում է ազգային անվտանգությանը վերաբերող ուսումնասիրությունների խնդրային ու առարկայական դաշտը: Ատենախոսության առանձին դրույթներ կարող են կիրառվել անվտանգային ոլորտում երկկողմ և բազմակողմ համագործակցության օրակարգերի մշակման, ռազմավարական փաստաթղթերի թարմացման գործընթացում:

Օգտագործվել է բավականաչափ աղբյուրաբանական և գիտական հենք: Հետազոտությունը միջառարկայական բնույթ է կրում, ինչն արտացոլվում է նաև ուսումնասիրության հիմքում ընկած մեթոդաբանության մեջ: Ատենախոսը օգտագործել է դիալեկտիկական, պատմահրավական, վիճակագրական գնահատման, բովանդակային վերլուծության և համեմատական մեթոդներ: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության տեքստին: Ատենախոսն ունի թվով 6 գիտական հոդված, որոնցում արտացոլված են ատենախոսության հիմնական դրույթները:

Մեկնաբանություններ և նկատառումներ

Այնուհանդերձ անհրաժեշտ ենք համարում նշել, որ ատենախոսությունը ավելի կշահեր, եթե հեղինակը նկատի ունենար առաջարկվող հետևյալ դիտարկումները՝

1. Հավաքական անվտանգության գործակցության համատեքստում օգտակար կլիներ անդրադառնալ նաև հիբրիդային սպառնալիքների նույնականացման և հակազդման մեխանիզմներին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիբրիդային սպառնալիքների ազդեցության մակարդակի (տեղական, տարածաշրջանային, միջազգային և այլն) չհստակեցման պարագայում պակաս արդյունավետությամբ կընտրվեն խնդիրներին դիմակայման գործիքակազմերը, իսկ առկա ռեսուրսները կվատնվեն ոչ նպատակային ձևով՝ ընդհուպ փոշիացնելով խնդիրների համապարփակ լուծման համար առկա հմտություններն ու կարողությունները: Դրանք կարող են հանգեցնել նաև խնդիրների լուծմանը կարճաժամկետ հեռանկարում, սակայն հանգեցնել երկարաժամկետ ռազմավարությունների ձախողմանը, ինչը կարող է անդառնալի լինել՝ ուղիղ հարվածի տակ դնելով հավաքական անվտանգային կառույցին կամ անդամ պետություններին:
2. Աշխատանքում օբյեկտիվորեն և համակողմանի կերպով վերլուծվել են հիմնական խնդիրները, որոնք առկա են հավաքական անվտանգային տարբեր ձևաչափերում, կառույցների գործունեության համատեքստում, սակայն աշխատանքն էականորեն կշահեր, եթե ներկայացվեին գործունեության արդյունավետության բարձրացման մեխանիզմները ևս՝ արպես առկա խնդիրների հաղթահարման գործուն մեխանիզմներ:
3. Ատենախոսության՝ «Խաղաղապահ առաքելությունները որպես հավաքական անվտանգային քաղաքականության կառուցակարգ (հայաստանյան դիսկուրս)» վերնագրով 3.4 ենթագլխում ատենախոսը նշում է, որ խաղաղապահ առաքելությունները երբեմն կիրառվում են միջազգային իրավունքի կոպիտ ոտնահարմամբ, մեծապես պայմանավորված են աշխարհաքաղաքական շահերով և այլն: Միջազգային խաղաղապահ առաքելությունների ներգրավման ու գործունեության արդյունավետության մեծացման վերաբերյալ դիտարկումները կհարստացնեին աշխատանքն ու կմեծացնեին գործնական նշանակությունը:

Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու այս ոլորտում առկա լրջագույն խնդիրները՝ ցանկալի և խրախուսելի կլիներ աշխատանքից բխող առաջարկությունների փաթեթի մշակումը և ներկայացումը համապատասխան գերատեսչություններին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտարկումները չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով թեմայի արդիականությունն ու շարադրանքի փոխկապակցված տրամաբանությունը, հեղինակի գիտական պատրաստվածությունը, եզրահանգումները՝ կարծում ենք, որ Մեր Արմոյի

Շիրինյանի «Հայաստանի Հանրապետության հավաքական անվտանգային գործակցության հիմնախնդիրներն արդի ժամանակաշրջանում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգին և ՀՀ ԲԿԳԿ-ի կողմից նմանատիպ աշխատանքներին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն էլ արժանի է ԻԳ.00.02 «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Կարծիքը քննարկվել և հաստատվել է ԲՊՀ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի 2026թ. ապրիլի 22-ի թիվ 6 նիստում:

Վարդան Անլանյան
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի ՅՈՒՆԵՍԿՕ-ի
Քաղաքագիտության և փիլիսոփայության ամբիոնի վարիչի ժ/պ

«Փ.գ.թ., ա.գ.թ., դոցենտ Վարդան Անլանյանի ստորագրությունը հաստատում եմ»:

ԲՊՀ գիտական քարտուղար՝ Հասմիկ Փիլավջյան

Տեղեկություններ առաջատար կազմակերպության մասին.
Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան
Հասցե՝ ք. Երևան 0002, Թումանյան 42,
Հեռ.՝ (010) 522 020